ի առանց վարձի տուել են կլուբի համար յօդուտ հասարակաց։

Եղել են դրա Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան հիմնադիր անդամներ. չեն խնայել յիշեալ ընկերութեան, Աղքատախնամ հոգաբարձութեան, Ղամախուոյ քաղաքի երկսեռ ուսումնարաններին, Սաղիանու ս. Ստեփաննոսի վանքին, Գանձակու ս. Թարգմանչաց վանքին, Տփխիսի Ներսիսեան հոգեւոր դպրոցին, Մատրասու Նորաշէն ուսումնարանին, վերջապէս ազգային ամեն հաստատութիւններից օգնութիւն խնդրողներին, պանդուխտ հայերին և ամեն կարօտելոց՝ իրենց կարողութեան չափ առատ նուիրատուութիւնները։

Այժմ խան Պօղոս ազգայի ութ որդիներից կենդանի մնում է նորա կրտսեր որդին՝ աղա Կարապետը, որ եօթանասուն ամեայ հասակում տակաւին ժրութեամբ գործում է և կառավարում իւր ձեռքով իւր կալուածները և բազմամարդ գերդաստանը։ Ազնուական Լալայեանց տան այդ ծերունի նահապետը Բագուի մէջ ամենայն լաւութեամբ պահպանում է իրենց տոհմի նահապետական պատիւը։ Այդ հասակում տակաւին երեւում է կայտառ. մի և նոյն ժամանակ կրօնասէր է և մարդասէր. պահպանել է մինչեւ յայսօր իւր սրամտութիւնը։ Ընթերցասէր է և լաւ պատմաբան՝ իւր ծնողներից և պապերից լսածների և ակնատես եղածների վերաբերմամբ։

Կարապետ աղան ունի որդիք և դստերք և թոռունք։

Ղամախու Լալայեանցների նախնիքը երեւումն և 1788 թուին՝ Ասրախան քաղաքում, ինչպէս ի Ս. Պետերբուրգ տպած Ներսիսի Շնորհալւոյ Ընդհանրական գրքի յիշատակարանից երեւում է, ուր ի թիւս օժանդակողաց պատրաստութեան տպարանին Նոր Նախիջեւանայ ձեռամբ Յովսէփ արքեպիսկոպոսի Արղութեանց՝ երեւի «Ազնիւ պարոն Յովակիմն Լալայով» յերես 334։

Այս Լալայովներից յառաջացել են բաւական մարդիկ և գտնւում են Ռուսաստանի շատ քաղաքներում։

Յունվար 1896 ԽՈՐԷՆ Ա. Ք Մ.

Բագու։